

**Ուսումնական տարհանում Արագածոտնի ՄՓՎ-ի և <<Փրկենք
երեխաներին>> ՀԿ-ի հետ համատեղ**

Հունվարի 6-ին Արագածոտնի մարզային փրկարական վարչությունը <<Փրկենք երեխաներին>> հասարակական կազմակերպության հետ համատեղ Աշտարակ քաղաքի <<Հովիկ>> և Աշտարակի թիվ 3 ներառական կրթության դպրոցում իրականացրեց ուսումնական տարհանում:

Չնայած նրան, որ մանկապարտեզում առաջին անգամ էր իրականացվում նմանատիպ միջոցառում, Արագածոտնի մարզային փրկարական վարչության աշխատակիցներին գոհացրեց ստացված արդյունքը:

Աշխատանքներին մասնակցեցին նշված հաստատությունների աշխատակիցներ, երեխաներ, ծնողներ և ուսուցիչներ: Արագածոտնի ՄՓՎ-ի աշխատակիցները՝ փ/ծ լեյտենանտ Մուրադյանը, փ/ծ սերժանտներ Ա. Կարապետյանը և Լ. Բադալյանը օգտակար ցուցումներ տվեցին ուսումնական տարհանման մասնակիցներին:

Արագածոտնի ՄՓՎ ՃԿԿ ՕՀՀ փ/ծ սերժանտ Լ. Բադալյան